# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

18 մայիսի 2026 թվականի թիվ 55-Ա

ք. Երևան

## ՀԱՆՐԱՅԻՆ ՄՈՒԼՏԻՊԼԵՔՍՈՒՄ ՍԼՈԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՓՈՒՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՉՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2026 թվականի հունվարի 23-ին հայտարարել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ)՝ հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 44-րդ հոդվածի 1-ին, 5-րդ մասերը և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության՝ հանրային մուլտիպլեքսում հանրապետական սփռման ազատ սլոթ առաջանալու մասին 2026 թվականի հունվարի 5-ի թիվ 01/11.1/23-2026 գրությունը:

Մրցութային հայտերի և կից փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամանակահատվածում (23.02.2026թ.-16.03.2026թ. ներառյալ) ներկայացվել է մեկ հայտ՝ 2026 թվականի մարտի 16-ին հայտ է ներկայացրել «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն), որը հեղինակազրկվել է 2026 թվականի մարտի 13-ին:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի և Հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ Ընկերությունը հայտին կից ներկայացրել է

1. փաստաթուղթ տեսալսողական մեդիածառայություն մատուցողի նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ,
2. ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր,
3. տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների վերաբերյալ,
4. տեղեկություններ աշխատակազմի քանակի, նրանց կրթության և մասնագիտության վերաբերյալ,
5. էթիկայի կանոնագիր,
6. էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները,
7. լիցենզավորման մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը:

2026 թվականի մարտի 24-ին Հանձնաժողովի դռնբաց նիստի ընթացքում հրապարակվել են ներկայացված հայտը և կից փաստաթղթերը (այսուհետ նաև՝ Հայտ). Ընկերության ներկայացուցիչը հնարավորություն է ունեցել մինչև 30 րոպե տևողությամբ ներկայացնել դրանց բովանդակությունը:

Ընկերության հայտը և կից փաստաթղթերը ներկայացվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Ընկերությունն իր նախանշած նպատակների իրագործման հիմնական ուղղությունների և միջոցառումների ընդհանրական նկարագրի վերաբերյալ փաստաթղթում ներկայացրել է իր ծրագիրը, որտեղ Օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասով և Կարգի 37-րդ կետով սահմանված գնահատման չափանիշներին ընդհանուր անդրադարձ է կատարվել:

«ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերության («ԱՐԱՐ» ծրագիր) հայտի համաձայն՝

Ընկերությունը նախատեսում է հեռարձակել տեղեկատվական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և մարզական ուղղվածության հաղորդումներ: Ընկերության առաքելությունն է ապահովել ճշգրիտ և բազմակողմանի տեղեկատվություն, նպաստել առողջ հանրային կարծիքի ձևավորմանն ու ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը, երաշխավորել ազատ խոսքի հանդեպ հարգանքը, ինչպես նաև հանրային կարևորության հարցերի շուրջ բաց և հավասարակշռված քննարկումների կազմակերպումը: Որպես Ընկերության առաքելություն նշվել է նաև ազգային մշակույթի պահպանմանը, կրթության զարգացմանը և մեդիագրագիտության բարձրացմանն աջակցելը:

Հայտում նշվել են Ընկերության նպատակները, որոնց թվում են՝ հավաստի լրատվության մատուցում, օբյեկտիվ լուսաբանման ապահովում, հանրային քննարկումների խթանում, բազմակարծության զարգացում, նոր մեդիամշակույթի ձևավորում՝ հիմնված ազատ խոսքի, բազմակարծության, արդարության և ազգային արժանապատվության վրա: Նշված նպատակներին հասնելու համար Ընկերությունը ներկայացրել է իր առջև դրված հիմնական խնդիրները՝ տեղեկատվության ճշգրտության ապահովում, լրագրողական էթիկայի պահպանում, ապատեղեկատվության և մանիպուլյացիայի բացառում, բազմակողմանի լուսաբանման ապահովում, մարդու իրավունքների և անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանություն, տեղեկատվության մատչելիության ապահովում, նոր տեխնոլոգիաների կիրառում:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը, ձևաչափը, բովանդակությունը, տևողությունը, հեռարձակման պարբերականությունը, մեկ շաբաթվա եթերացանցը, ինչպես նաև բազմապրոֆիլ մեդիաարտադրության և ֆիլմարտադրության, միջազգային լրատվական և վավերագրական, սպորտային բովանդակության ու հեռարձակման ոլորտներում գործակցության շրջանակում միջազգային գործընկերների նախնական ցանկը:

Համաձայն ներկայացված տեղեկատվության՝ Ընկերությունը նախատեսում է սեփական արտադրության որակյալ դրամաների և սիթքոմների հեռարձակում, ինչպես նաև սեփական նախագծերի ու սերիալների պատվիրում և համատեղ արտադրություն՝ համագործակցելով հայաստանյան արտադրող ընկերությունների և անկախ ստուդիաների հետ:

Հայտի համաձայն՝ հայերեն լեզվով հեռարձակվող տեսալսողական հաղորդումները կկազմեն եթերաժամի գերակշիռ մասը: Ընկերությունը երաշխավորում է, որ ամսական ընդհանուր եթերաժամի առնվազն երկու երրորդը (70 տոկոսը) կլինի հայերեն լեզվով:

Ընկերությունը նախատեսում է հաղորդումներում ապահովել բազմակողմանի լուսաբանում՝ ներկայացնել տարբեր կարծիքներ և դիրքորոշումներ՝ պահպանելով հավասարակշռությունը, նպաստել խոսքի ազատությանը և զարգացնել

բազմակարծությունը, ինչպես նաև խթանել հանրային քննարկումները՝ հանդես գալով որպես ազատ հարթակ տարբեր կարծիքների և դիրքորոշումների արտահայտման համար:

Տեխնիկական հնարավորությունների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունը ներառում է տեխնիկական միջոցների անվանական ցանկը՝ տեխնիկական բնութագրերով: Ընկերությունը ներկայացրել է նաև տեխնիկական և տաղավարային համալիրի կառուցվածքը և նկարագիրը, տաղավարների հնարավորությունները, ծրագրային ապահովումը:

Ֆինանսական հնարավորությունների վերաբերյալ Ընկերությունը Հայտում ներառել է գրություն մինչև մեկ միլիարդ ՀՀ դրամ գումարի չափով ներդրում կատարելու պատրաստակամության մասին: Նշված ներդրումն իրականացնելու նպատակով Ընկերությունը պատրաստվում է ներգրավել վարկային միջոցներ Ընկերության 100 տոկոս բաժնեմասերի սեփականատերերին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի գրավադրման արդյունքում:

Ներկայացվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը:

Բացի այդ, ներկայացվել են նաև Ընկերության ֆինանսական վիճակի, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններ 31.12.2024թ.-ի և 31.12.2025թ.-ի դրությամբ:

Ընկերությունն արդյունավետ ու մրցունակ գործունեության առանցքային նախապայման է համարում պրոֆեսիոնալ կառավարման համակարգի ձևավորումն ու փորձառու մասնագիտական թիմի առկայությունը: Ընկերությունը կարևորում է լրագրողների, պրոդյուսերների, տեխնիկական մասնագետների և կառավարման անձնակազմի մասնագիտական կարողությունների շարունակական զարգացումն ու կատարելագործումը: Հայտում ներկայացվել են աշխատակազմի կառուցվածքը և 5 առանցքային աշխատակիցների բնութագրերը:

Ընկերությունը նպատակային է համարում լինել պատասխանատու լրատվամիջոց՝ ձևավորել հանրային վստահություն՝ գործունեության հիմքում դնելով լրագրողական էթիկան և հանրային շահի գերակայությունը: Էթիկայի կանոնների պահպանումն ապահովելու վերաբերյալ Ընկերությունը ներկայացրել է սեփական էթիկայի կանոնագիրը, էթիկայի կանոնագրի հաստատման և ապահովման կարգը, որտեղ ներկայացվել է ինքնակարգավորման գործառույթն իրականացնող մարմնի կազմը:

*Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը*

Այսպիսով Հանձնաժողովը, ղեկավարվելով օրինականության, ժողովրդավարության, հավասարության, անաչառության, ինքնուրույնության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքներով, Ընկերության Հայտի ուսումնասիրության, վերլուծության և գնահատման արդյունքում ամրագրում է հետևյալը.

Օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի և Կարգի 37-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը մրցույթում մասնակցի գնահատման ժամանակ հաշվի է առնում սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը, հայերեն հաղորդումների գերակայությունը, բազմակարծությունը խթանելու կարողությունը, հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները, աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը, ազգային, համամարդկային, հոգևոր,

մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը:

Հարկ է արձանագրել, որ թեև Հայտում Ընկերության առաքելությունը, նպատակները և ծրագրի ընդհանուր ուղղվածությունը ներկայացված են բովանդակային առումով ընդգրկուն, սակայն Հայտի գնահատումը պետք է իրականացվի Օրենքով և Կարգով սահմանված գնահատման չափանիշների համատեքստում:

*Սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը*

Հայտում առկա տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում սեփական արտադրության հաղորդումների ապահովման վերաբերյալ նշենք, որ Ընկերությունը ներկայացրել է սեփական արտադրության մի շարք հաղորդումներ, դրանց բովանդակությունը, հեռարձակման ձևաչափը և պարբերականությունը: Ներկայացված հաղորդումների թվում են «Հայի տունը», «Գյուղի ուժը», «Իմ տունը քո տունն է», «Գիտելիքի մարտ» և այլ հաղորդումներ:

Արձանագրենք, որ Հայտում չի նշվել սեփական արտադրության հաղորդումների ծավալը: Միաժամանակ, Ընկերության կողմից ներկայացված տեղեկատվությունն ամբողջական չէ սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը լիարժեք գնահատելու համար:

*Հայերեն հաղորդումների գերակայությունը*

Հայերեն հաղորդումների գերակայության ապահովումը մրցույթի գնահատման չափանիշներից է: Միաժամանակ, հեռարձակողների համար Օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է պարտադիր պահանջ, համաձայն որի՝ հայերեն տեսալսողական հաղորդումները մեկ հեռարձակողի հեռարձակմամբ չեն կարող պակաս լինել ամսական ընդհանուր ժամաքանակի 55 տոկոսից: Ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը նախատեսում է ապահովել Օրենքով սահմանված նվազագույն պահանջից բարձր ցուցանիշ՝ 70 տոկոս:

Համեմատության կարգով հարկ է նշել, որ նախորդ չորս տարիներին հանրային մուլտիպլեքսում հանրապետական և մայրաքաղաքային սփռման հեռարձակողների եթերում հայերեն հաղորդումների ծավալը կազմել է շուրջ 93-95 տոկոս: Այսպիսով Ընկերության կողմից ներկայացված ցուցանիշը համապատասխանում է Օրենքով սահմանված պահանջին և գերազանցում է նվազագույն շեմը, սակայն համեմատական տվյալների հաշվառմամբ այն չի կարող գնահատվել որպես հայերեն հաղորդումների գերակայության բարձր ցուցանիշ:

*Բազմակարծությունը խթանելու կարողությունը*

Կարևորելով հանրային իրազեկման գործում հեռարձակողների դերակատարումը և ժողովրդավարական պետության մեջ քաղաքացու տեղեկացված լինելու իրավունքի ապահովումը՝ հարկ է նշել, որ Օրենքով երաշխավորված է տեղեկատվության ազատությունը, հավաստի տեղեկատվություն ստանալու իրավունքը, կարծիքների արտահայտման իրավունքը: Նշված իրավական երաշխիքները կոչված են նպաստելու տեսալսողական հաղորդումների բովանդակության բազմազանությանը և բազմակարծության խթանմանը:

Այս համատեքստում նշենք, որ Ընկերությունը նախատեսում է տեղեկատվական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, մարզական և այլ

ուղղվածության հաղորդումներ, հետևաբար կարելի է եզրակացնել, որ Հայտում ներկայացվել է ընդհանուր ուղղվածության տեսալսողական ծրագիր: Միաժամանակ, ներկայացված Հայտից հնարավոր չէ ամբողջական պատկերացում կազմել ծրագրում թեմատիկ բաշխվածության հաղորդումների համամասնության վերաբերյալ: Բացի այդ, հանրօգուտ բովանդակություն համարվող մշակութային, մանկական և մարզական ուղղվածության հաղորդումները Հայտում ներկայացված են սահմանափակ:

Հաղորդումներում բազմակարծության ապահովման մասով նշվել են մի շարք մտադրություններ՝ բազմակողմանի լուսաբանման ապահովում, տարբեր կարծիքների և դիրքորոշումների ներկայացում, սակայն բազմակարծության չափանիշի ապահովման շրջանակում ներկայացվել է միայն «Խոսենք բաց» հասարակական-քաղաքական հաղորդումը:

*Ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը*

Հայտում շարադրված են Ընկերության նպատակները, առաքելությունը, որոնց թվում են ազգային մշակույթի արժևորումն ու ազգային մշակույթի պահպանմանն աջակցելը: Հարկ է նշել, որ այս չափանիշի ապահովումն անհրաժեշտ էր հիմնավորել մշակութային հաղորդումների առկայությամբ, սակայն նախատեսվող հաղորդումների շարքում նշված են ազգային մշակույթը ներկայացնող միայն «Հայի տունը» հաղորդաշարը, ինչպես նաև «Իմ տունը քո տունն է» (ազգային փոքրամասնությունների մշակույթը ներկայացնող հաղորդում) և «Արվեստակները» մշակութային հաղորդումները:

*Տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները*

Ընկերության տեխնիկական միջոցների և հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում արձանագրենք, որ համաձայն ներկայացված տեխնիկական հիմնական միջոցների ցանկի՝ Ընկերությունն ունակ է իրականացնել տեսալսողական բովանդակության արտադրության և հեռարձակման գործառույթներ:

Ըստ ցանկի՝ ընկերությունը կունենա արտադրական տաղավարներ.

1. տաղավար 1՝ լրատվական ծրագրերի և օպերատիվ տեղեկատվական թողարկումների համար,
2. տաղավար 2՝ ժամանցային, մշակութային հաղորդումների թողարկումների համար,
3. տաղավար 3՝ մեծածավալ նախագծերի համար, որը պետք է ունենա 400 քմ մակերես,
4. եթերի հեռարձակման սարքասրահ,
5. ապարատաստուդիական սրահ՝ control room,
6. շարժական հեռուստատեսային կայան՝ OB VAN:

Լրատվական ծառայության աշխատանքների համար նախատեսվում է ձեռք բերել միջազգային առաջատար Octobus News Room թղթակցական համակարգը, որն ունի հետևյալ գործառույթները՝

1. լրատվական թեմաների համակարգում,
2. լրագրողական անձնակազմի աշխատանքների կազմակերպում,
3. լրատվական տեքստերի պատրաստում և սրբագրում,
4. լրատվական թողարկման Run Down սահմանում,
5. մեկնաբանի տեքստերի ինտեգրում հեռուստահուշարարի ծրագրի հետ,
6. տեքստային բազայի արխիվացում և կառավարում:

Ըստ ներկայացված հայտի՝ տեսանյութերի և թվային ֆայլերի անվտանգ պահպանության համար ձեռք է բերվելու Media Asset Managment համակարգը, որը համարվում է առաջատարներից մեկը տվյալ ոլորտում: Համակարգն ապահովում է

1. մեդիա ֆայլերի դասակարգում և պահպանություն,
2. մեդիա ֆայլերի անվտանգ հասանելիություն,
3. մեդիա ֆայլերի թվային արխիվի կառավարում:

Հեռուստաազդանշանի տեսողական ձևավորման, տարբեր գրաֆիկական լուծումների համար նախատեսվում է կիրառել Broadcast Graphics Vizirt/Vis Artist/Viz Engine համակարգը, որն ապահովում է

1. Real Time ժամանակում գրաֆիկական նիշերի ստեղծում,
2. տեսողական տվյալների մատուցում,
3. վիրտուալ և իրական տաղավարների տարրերի համադրում/ Augmented Realty-Ar/,
4. լրատվական և վերլուծական թողարկումների հաջորդական ձևավորում:

Ընկերությունը կիրառելու է ժամանակակից ոչ գծային մոնտաժային ծրագրեր՝ Linear Editing Systems.

1. Adobe premiere Pro - տեսաֆայլերի մասնագիտացված համակցման ծրագիր,
2. Avid Media Composer - հեռուստաարդարանքի միջազգային չափորոշիչներին համապատասխանող ծրագիր:

Այս նորարարական տեխնոլոգիաների կիրառումը տալիս է հնարավորություն հեռարձակել տեխնիկապես բարձր թողունակության ազդանշան, որը համապատասխանում է առաջատար լրատվական ծառայությունների չափանիշներին:

Եթերի հեռարձակման համակարգը համալրված է լինելու միջազգային չափորոշիչներին համապատասխան Blackmagic Design մակնիշի համակարգչային և հեռուստատեսային սարքավորումներով.

1. սերվերային եթերային համակարգ 2 հատ՝ 1920/1080 HD/DSD 2 In and 2 Out ծրագրային ապահովմամբ և սոցիալական հարթակներում հեռարձակելու Stream հնարավորությամբ,
2. եթերի պահուստային Backup անցումային ապահովում ինչպես ծրագրային այնպես էլ մեխանիկական ձևաչափով՝ Less-TV-SW-212HDAE 3Gbit Channels SDI/ASI Changeover Switch,
3. եթերային ազդանշանը տեսագրող սարք HyperDeck Studio 4k Pro,
4. Blackmagic Design Multiviewer 4k տեխնիկական վերահսկիչ,
5. հիշողության պահոց /Storage Sinology/ - 190 TB,
6. տեսաբաժանարար Blackmagic Design 20-20 /12G/ 4K,
7. տեսաազդանշանի սինխրոգեներատոր Blackmagic Design 20-20 /12G/ 4K:

Եթերային սարքասրահի հոսանքի անխափան սնուցումը նախատեսվում է ապահովել UPS APC 5000 VA սարքով, որի հզորությունը հնարավորություն է տալիս հոսանքի վթարային անջատումների ժամանակ շարունակել եթերի հեռարձակումն առանց որևէ տեխնիկական ընդհատումների:

Ընկերությունն իր լրատվական թղթակցական կետում նախատեսում է շահագործել Sony մակնիշի հեռուստատեսային սարքավորումներ՝

1. ֆոտոխցիկ Sony Alpha FX3՝ 3 հատ, որոնք իրենց կազմում կունենան համապատասխան տեխնիկական միջոցներ,
2. օբյեկտիվ Sony FE 70 200 mm,
3. օբյեկտիվ Sony FE 24-70 mm,
4. օբյեկտիվ Sony FE 16-35 mm,
5. լուսավորման սարքեր Nanlite Forza 500 B,

6. լուսավորման սարքեր Tian Tube RGB LED,
7. տարբեր ձևաչափի հեռավար և ոչ հեռավար պրոֆեսիոնալ խոսափողեր, ձայնագրիչ սարքեր, թվային կրիչներ,
8. կիրառվելու են նաև ԳՕ-ՊՌՕ/GO-PRO Hero13 ձևաչափի նկարահանող սարքեր,
9. ուղիղ եթերի հեռարձակման տեխնոլոգիական սարքեր / LiveU Solo Wireless Live Streaming:

Լրատվական ծառայության հավաքակցման սրահներում նախատեսվում է ձեռք բերել հետևյալ համակարգչային մոնտաժային ստացիոնար կայանները.

1. համակարգիչ I9-14900K/64GB/1TB SSD.RTX40՝ 3 կոմպլեկտ,
2. համակարգիչ I7-14700K/64GB/2TB SSD/8TB HDD/RT X4070T1՝ 1 կոմպլեկտ,
3. դյուրակիր համակարգիչ DELL Vostro 3530/15.6 FHD120Hz/i7-1355՝ 12 հատ,
4. դյուրակիր համակարգիչ Apple Macbook Pro՝ 1 հատ,
5. անխափան սնուցման սարքեր BX 1600M I-CR APC Back-UPS 1600 VA 230 V AVR Sahuko Sockets:

Ընկերությունն իր առաջին տաղավարում նախատեսում է շահագործել Canon մակնիշի հեռուստատեսային սարքավորումներ իրենց համապատասխան կոմպլեկտացիաներով՝

1. տեսախցիկ Canon EOS CBO 6K՝ 4 կոմպլեկտ,

Տեսաազդանշանը տեսագրելու համար կտեղադրվեն

1. Bkackmagic Design HyperDeck Studio HD Plus՝ 1 հատ,
2. Mixer Allen Heath Qu -5 36 Channels՝ 1 հատ,
3. տեսահուշարարի կոմպլեկտ Telepromter Travel Kit՝ 2 հատ:

Ընկերությունը նախատեսում է իր երկրորդ տաղավարում շահագործել Bkackmagic Design մակնիշի հեռուստատեսային տեխնիկական միջոցներ՝

1. տեսախցիկ Bkackmagic Design Ursa Broadcast C2՝ 4 կոմպլեկտ
2. Bkackmagic Design HyperDeck Studio HD Plus՝ 1 հատ
3. Mixer Allen Heath Qu -5 36 Channels՝ 1 հատ:

Ընկերությունը նախատեսում է Ford Tranzit մակնիշի ավտոմեքենայի բազայի վրա հավաքակցել մասնագիտացված շարժական կայան: Ներկայացված ցանկը լիովին բավարարում է բարձր տեխնիկական չափանիշներով հեռուստաարտադրանք հեռարձակել.

1. տեսախցիկ Canon EOS C80՝ 2 կոմպլեկտ,
2. տեսախցիկ Canon EOS C400՝ 1 կոմպլեկտ,
3. Bkackmagic Design HyperDeck Studio HD Plus՝ 1 հատ,
4. Mixer Allen Heath Qu -5 36 Channels՝ 1 հատ:

Ընկերությունը պլանավորում է ձեռք բերել արբանյակային հեռարձակման տեխնիկական միջոցներ ՀՀ տարածքում և երկրի սահմաններից դուրս հեռուտաազդանշանը հասանելի դարձնելու համար:

Նախատեսվում է ստեղծել OTT հարթակ ինտերնետային հեռարձակում ապահովելու համար տարբեր սոցիալական մեդիաներում և բջջային հավելվածներում:

Ամփոփելով Ընկերության ներկայացրած հայտի տեխնիկական միջոցների ուսումնասիրությունը՝ արձանագրենք, որ Ընկերությունը ներկայացված տեխնիկական միջոցների ձեռք բերման և շահագործման պարագայում հեռուստատեսային չափորոշիչներին համապատասխան կարող է ապահովել բարձրակարգ հեռուստաարտադրանքի ստեղծում և հեռարձակում:

Այս համատեքստում նշենք, որ թեև Ընկերությունը ներկայացրել է նախատեսվող տաղավարների կառուցվածքը և տեխնիկական հնարավորությունները, սակայն հայտում բացակայում է տեղեկատվություն Ընկերության գործունեության իրականացման տարածքի, դրա նկատմամբ սեփականության, վարձակալության կամ այլ իրավական հիմքով օգտագործման իրավունքի վերաբերյալ:

*Ընկերության ֆինանսական կարողությունները վերլուծելու նպատակով ուսումնասիրվել են Հայտում ներկայացված ֆինանսական փաստաթղթերը, ինչպես նաև հաշվի են առնվել Ընկերության ստանձնած ֆինանսական պարտավորությունների ծավալը և դրանց կատարումն ապահովելու կարողությունը հիմնավորող փաստաթղթերի առկայությունը:*

Արձանագրենք, որ ներկայացված ֆինանսական փաստաթղթերը բավարար չեն Ընկերության ֆինանսական կարողությունների ամբողջական գնահատման համար. չի ներկայացվել որևէ տեղեկատվություն անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման, ինչպես նաև ֆինանսական պլանավորման վերաբերյալ էական տվյալներ, այդ թվում՝ նախնական ֆինանսական հաշվարկներ ու գնահատումներ, ծախսերի ուղղությունները և եկամուտների կառուցվածքը, դրանց հաշվարկների հիմքերը և վերլուծությունները:

Միաժամանակ, չի ներկայացվել նաև առաջիկա տարիների ֆինանսական կանխատեսումների մասին տեղեկատվություն: Բացի այդ, Ընկերությունը չի նշել իր եկամուտի ձևավորման աղբյուրները, մասնավորապես՝ չկա որևէ տեղեկատվություն հնարավոր եկամտային ձևավորման մեխանիզմների վերաբերյալ:

Բացակայում է նաև գովազդային քաղաքականության վերաբերյալ տեղեկատվությունը: Մասնավորապես՝ Հայտում չեն ներկայացվել գովազդատուների ներգրավման, գովազդային եկամուտների կանխատեսման, ինչպես նաև դրանց՝ Ընկերության ընդհանուր եկամտային կառուցվածքում հնարավոր մասնաբաժնի վերաբերյալ մոտեցումներ:

Արձանագրենք նաև, որ միջազգային գործընկերների հետ համագործակցության շրջանակում ներկայացվել է միայն այդ ընկերությունների նախնական ցանկը, սակայն չի ներկայացվել սլոթի օգտագործման լիցենզիա ստանալու դեպքում համագործակցության վերաբերյալ նախնական պայմանավորվածության, մտադրությունների մասին որևէ հիմնավորում:

Հետևաբար կարելի է եզրակացնել, որ Ընկերության ֆինանսական կարողությունները բավարար հիմնավորված չեն ծրագրի իրագործումն ապահովելու համար: Մասնավորապես՝ ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ գնահատելու տեխնիկական միջոցների ձեռքբերման, աշխատակազմի ձևավորման և պահպանման, հաղորդումների արտադրության ու հեռարձակման, ինչպես նաև ընթացիկ ծախսերի արդյունավետ կառավարման իրական հնարավորությունները:

*Աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը*

Հայտում ներկայացված 5 աշխատակիցների բնութագրերի համաձայն՝ աշխատակիցները մեդիայի ոլորտում ունեն մասնագիտական փորձ: Միաժամանակ արձանագրենք, որ բնութագրերից մեկն է հայերեն լեզվով ներկայացվել, մնացածը՝ անգլերեն լեզվով, իսկ աշխատակիցների թվի մասին տեղեկատվություն չի ներկայացվել:

*Էթիկայի կանոնագիր, էթիկայի կանոնագրի դրույթների ապահովման ինքնակարգավորման միջոցները*

Օրենքի համաձայն՝ հեռարձակողները կազմում և սպառողին են ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն են կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար: Այս համատեքստում նշենք, որ Էթիկայի կանոնների պահպանումն ապահովելու նպատակով Ընկերությունն ընտրել է ներքին ինքնակարգավորման տարբերակը, համաձայն որի՝ Էթիկայի հանձնաժողովի կազմում ընդգրկվող անձանցից երկուսը Ընկերության ներկայացուցիչներ են: Արձանագրենք, որ այսպիսի պայմաններում անհրաժեշտ է ապահովել ինքնակարգավորման մարմնի անկախությունը և բացառել հնարավոր շահերի բախումը: Հետևաբար շահերի բախումից խուսափելու նպատակով Ընկերությունը ներկայացնող անձինք չպետք է գտնվեն այդ Ընկերության հետ այնպիսի աշխատանքային հարաբերություններում, որոնք կարող են ազդել Էթիկայի հանձնաժողովի անկողմնակալության և օբյեկտիվության վրա:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հանձնաժողովի դիտարկմամբ սահմանափակ ռեսուրսի՝ սլոթի օգտագործման միջոցով հեռարձակվող տեսալսողական ծրագրերի բովանդակությունը պետք է արտացոլի հանրային պահանջմունքների և հետաքրքրությունների բազմազանությունը:

Տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, միջազգայնորեն ընդունված հայեցակարգերն ու չափորոշիչները նախատեսում են, որ լիցենզիա ստացած տեսալսողական մեդիածառայություններ մատուցողները պետք է ունենան կառավարման և ֆինանսավորման թափանցիկ համակարգ, լինեն անկախ ու վստահելի, ապահովեն հաղորդումների բարձր որակ, ինչպես նաև առանցքային դերակատարում ունենան ազգային մշակույթի պահպանման և պաշտպանության, ազգային ինքնության ձևավորման գործում:

Օրենքի 46-րդ հոդվածի 6-րդ մասի և Կարգի 29-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի անդամները վարկանիշային փակ քվեարկության միջոցով կատարում են լիցենզավորման մրցույթում հաղթող մասնակցի ընտրությունը:

Վարկանիշային փակ քվեարկություն ապահովելու նպատակով անցկացվել է վիճակահանություն, որի ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պատահականության սկզբունքով վերցրել է Հանձնաժողովի անդամների թվին համապատասխան վիճակահանության՝ թվագրում պարունակող թերթիկներից մեկը և փոխանցել Հանձնաժողովի քարտուղարին, որը վիճակահանության թերթիկում նշված թվագրումով գնահատման թերթիկը տրամադրել է Հանձնաժողովի անդամին:

Վարկանիշային քվեարկությունից առաջ Հանձնաժողովի անդամները հանդես չեն եկել հայտարարությամբ և միջնորդությամբ:

Օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասի և Կարգի 37-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը մրցույթում հաղթող մասնակցի ընտրության ժամանակ հաշվի է առնում

1. սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը,
2. հայերեն հաղորդումների գերակայությունը,
3. բազմակարծությունը խթանելու կարողությունը,
4. հայտատուի տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները,
5. աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը,
6. ազգային, համամարդկային, հոգևոր, մշակութային մնայուն արժեքների ճանաչողությանն ու ամրապնդմանն ուղղված հաղորդումների գերակայությունը,
7. գործող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցողի դեպքում՝ գործունեության իրականացման ընթացքում սլոթի օգտագործման

լիցենզավորման հայտով ստանձնած պարտավորություններին համապատասխանությունը:

Հարկ է նշել, որ վերոնշյալ իրավական կարգավորման 7-րդ կետը չի տարածվում «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերության վրա, քանի որ Ընկերությունը գործող լիցենզավորված տեսալսողական մեդիածառայություն մատուցող չի հանդիսանում:

Օրենքի 46-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վարկանիշային քվեարկության իրականացման ընթացակարգը սահմանվում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգով, որը Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ սահմանվել է Հանձնաժողովի կողմից:

Կարգի 32-րդ կետի համաձայն՝ սահմանվել է, որ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ, Կարգի 37-րդ կետի չափանիշները հաշվի առնելով, մրցույթի յուրաքանչյուր մասնակցի գնահատում է գնահատման թերթիկում՝ ամբողջ թվով՝ 20 միավորային սանդղակով: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ գնահատման թերթիկին կից ներկայացնում է իր գնահատման հիմնավորումը:

Գնահատման թերթիկի ձևը հաստատվել է Կարգի Ձև N 2-ով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ուսումնասիրելով ներկայացված հայտը և կից փաստաթղթերը՝ Հանձնաժողովի անդամներն իրենց հիմնավորումներով, փակ վարկանիշային քվեարկությամբ Ընկերության Հայտը գնահատել են հետևյալ միավորներով.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Գնահատման միավորը՝ ըստ գնահատման թերթիկի համարի | | | | | | Վարկանիշային միավորը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | |
| 1 | «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ | 4 | 6 | 4 | 6 | 7 | 5 | 32 |
| Անցողիկ շեմը | | 40 | | | | | | |

Հանձնաժողովի անդամները գնահատման թերթիկին կից ներկայացրել են իրենց գնահատման հիմնավորումները, որոնք կցվում են սույն որոշմանը:

Կարգի 32-րդ կետի համաձայն՝ մրցույթում անցողիկ շեմ է համարվում հնարավոր առավելագույն վարկանիշային միավորի մեկ երրորդը, իսկ վարկանիշային միավորը, Կարգի 33-րդ կետի համաձայն, որոշվում է գնահատման միավորների հանրագումարով:

Տվյալ մրցույթում անցողիկ շեմը 40 միավորն է:

Հանձնաժողովի անդամների վարկանիշային քվեարկության արդյունքում «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերությունը ստացել է 32 միավոր:

Կարգի 34-րդ կետի համաձայն՝ վարկանիշային քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվում անցողիկ շեմը հաղթահարած և առավելագույն վարկանիշային միավոր ստացած մասնակիցը, իսկ մեկ մասնակցի դեպքում՝ անցողիկ շեմը հաղթահարած մասնակիցը:

Մրցույթի միակ մասնակից «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերությունը չի հաղթահարել անցողիկ շեմը:

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 46-րդ հոդվածի 6-րդ, 8-րդ, 10-րդ մասերի, Հեռուստատեսության և

ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 94-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով վարկանիշային քվեարկության արդյունքները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերությանը չճանաչել հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթող:
2. Սույն որոշման անբաժանելի մաս համարել Հանձնաժողովի անդամների գնահատման հիմնավորումները՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2026թ. մայիսի 18
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2026 թվականի մայիսի 18-ի թիվ 55-Ա որոշման

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասնակցի՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերության («ԱՐԱՐ» ծրագիր) հայտի գնահատման

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը թվային հանրային մուլտիպլեքսը դիտարկում է որպես համակարգ, որում մրցույթով հեռարձակման իրավունք են ստանում տեսալսողական մեդիածառայություններ մատուցող այն ընկերությունները, որոնք տիրապետում են ֆինանսական եւ տեխնիկական բավարար ռեսուրսների, ունակ են ապահովելու հաղորդումների բազմազանությունն ու բազմակարծությունը և որոնց խմբագրական քաղաքականությունը սպասարկում է հանրության և պետության շահերը: Այստեղ հարկ է նշել, որ բոլոր երկրներում հանրային մուլտիպլեքսը դիտարկվում է որպես տվյալ պետության ինքնիշխան մեդիա հարթակ, որի միջոցով պետությունը ապահովում է իր քաղաքացիների իրավունքն ու պահանջմունքը՝ ստանալ օբյեկտիվ և բազմազան տեղեկատվություն:

Հաշվի առնելով վերը շարադրվածը, «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի դրույթները, ուսումնասիրելով մրցույթին մասնակցող «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ի հայտը ու կից փաստաթղթերը, ներկայացնում եմ իմ գնահատականի հիմնավորումը:

Ըստ ներկայացված հայտի ընկերության առաքելությունը բարձրորակ բովանդակության ստեղծումն է, տեղեկատվական, վերլուծական, մշակութային և կրթական հաղորդաշարերի բազմազանության ապահովումը, ինչպես նաև բազմաթիվ այլ խոստումներ և պարտավորություններ: Փաստաթղթի մի շարք դրույթներ համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին: Հետևաբար, կարելի էր դրական գնահատել ներկայացված այս չափազանց հավակնոտ հայտը, եթե չլինեին խանգարող ծանրակշիռ հանգամանքներ:

Դրանցից ամենակարևորը ծրագիրն իրագործելու ընկերության ֆինանսական հնարավորություններն են, ավելի ճիշտ անհնարինությունը: «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ն խոստանում է մեկ միլիարդ ՀՀ դրամ ներդնել հեռուստատեսությունը ստեղծելու և զարգացնելու համար, սակայն որպես ներդրում ներկայացնում է հիմնադիրներին պատկանող անշարժ գույք, որի գրավադրման արդյունքում կստեղծվեն անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Սակայն տրամադրված չէ որևէ տեղեկություն այդ անշարժ գույքի շուկայական արժեքի, արագ իրացնելու հնարավորության և այլնի մասին: Որևէ տեղեկատվություն ներկայացված չէ ծախսերի և եկամուտների կառուցվածքի, չկա որևէ ֆինանսական կանխատեսում գոնե 1-2 տարվա համար, նշված չեն եկամուտի գոյացման աղբյուրները, չկա որևէ տեղեկատվություն գովազդային քաղաքականության իրականացման վերաբերյալ և այլն: Տպավորություն է ստեղծվում, որ ընկերությունը բացարձակ տեղյակ չէ հանրային մուլտիպլեքսում հեռարձակվելու անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին:

Երկրորդ հանգամանքը աշխատակազմի մասնագիտական պատրաստվածության մասին տեղեկատվությունն է: Հայտում գրված է, որ «գործունեության առանցքային նախապայմանը փորձառու մասնագիտական թիմի առկայությունն է», սակայն նշված չէ աշխատակազմի քանակը, իսկ ընդամենը 5 աշխատակիցներից 4-ի բնութագրերը գրված են անգլերեն լեզվով: Հետևաբար «փորձառու մասնագիտական թիմի առկայությունը» համոզիչ չի հնչում:

Երրորդ հանգամանքը. «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերությունը հեղինակազորման հայտ էր ներկայացրել մրցույթին մասնակցելու համար: Այսինքն ընկերությունը մինչ մրցույթին մասնակցելը տեսալսողական մեդիածառայություններ չի մատուցել, և այս բնագավառում գործունեության փորձ չունի: Կարծում եմ, այս հանգամանքով է պայմանավորված խոստումների այն շռայլությունը, որոնք մենք տեսնում ենք հայտում: Օրինակ, Ընկերությունը ներկայացրել է միջազգային գործընկերների նախնական ցուցակը, որոնց հետ պատրաստվում է համագործակցել: Այդ ցուցակում են աշխարհի մեդիահսկաները (Warner Bros., Sony Pictures Television, The Walt Disney, Paramount Global...), որոնց հետ համագործակցելը հատկապես նորաստեղծ հեռուստատեսության համար բարի, բայց անիրականանալի երազանքների շարքից է: Հատկանշական է, որ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ն չի ներկայացրել համագործակցության մասին գեթ մեկ հուշագիր:

Եվ այսպիսի հանգամանքները բազմաթիվ են: Եզրակացնեմ. ընկերության ներկայացրած ծրագիրն ավելի շուտ բարի ցանկությունների շարադրանք է, իրագործելի չէ ընկերության ֆինանսական ռեսուրսներով: Հետևաբար ցածր եմ գնահատում մրցույթին ներկայացված ընկերության ծրագիրը:

**Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի նախագահ** **Տիգրան Հակոբյան**

14.05.2026թ.

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասնակցի՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերության («ԱՐԱՐ» ծրագիր) հայտի գնահատման**

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 2026 թվականի հունվարին հայտարարել էր հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթ, որին հայտ է ներկայացրել 1 ընկերություն՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ («ԱՐԱՐ» ծրագիր):

Մրցույթի մասնակցի հայտի վերաբերյալ իմ կարծիքն ու հիմնավորումը ներկայացնում եմ՝ հիմք ընդունելով ընկերության կողմից ներկայացված գրավոր հայտը:

Հայտի բովանդակային մասն իր մեջ պարունակում է տեղեկատվական, վերլուծական, մշակութային և կրթական հաղորդումներ, որոնց կարելի էր դրական գնահատել, եթե չլիներ այն հանգամանքը, որ ոլորտում հայտատուն նոր է և չունի փորձառություն հեռուստատեսային ծրագրի կազմակերպման և պատրաստման մեջ:

Եվ այս ծրագիրն իրականացնելու համար անհրաժեշտ են ֆինանսական, մարդկային և այլ միջոցներ, որոնց առկայությունը հայտի մեջ չենք տեսնում:

Տեխնիկական հագեցվածության և դրա ձեռքբերման մասով նույնպես չենք կարող վստահություն ունենալ՝ ելնելով ֆինանսական հիմնավորումների բացակայությունից:

Աշխատակազմի համալրման ուղղությամբ նախատեսվող քայլերը ևս անորոշ են, ներկայացված տվյալները թերի, որը բավարար չէ հայտի այս հատվածը դրական գրահատելու համար: Հայտի բացման ժամանակ ընկերության ներկայացուցչի այն պնդումը, թե իրենք կարող են լիցենզիան ստանալուց հետո 10-ից 20 օրյա ժամկետում եթեր մտնել, ոլորտում ընկերության գործունեությունը կազմակերպելու և իրականացնելու անհստակության և լիարժեք չպատկերացնելու ցուցիչ էր:

Քանի որ ընկերության հայտում անհնար է տեսնել այն քայլերը, որոնցով նրանք պատրաստվում են իրականացնել ներկայացված ծրագիրը, այսպիսով հայտը գնահատում եմ բացասական:

**Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ** **Արթուր Մանուկյան**

12.05.2026թ.

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասնակից «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ի («ԱՐԱՐ» ծրագիր) հայտի գնահատման վերաբերյալ

Համաձայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի որդեգրած ռազմավարության՝ թվային հանրային մուլտիպլեքսը պետության այն ինքնիշխան հարթակն է, որն ապահովում է օբյեկտիվ և բազմակարծիք տեղեկատվություն ստանալու հանրային իրավունքը: Դա ենթադրում է, որ մրցույթի հաղթողները պարտավոր են ունենալ ամուր ֆինանսատեխնիկական բազա և իրենց գործունեությամբ անվերապահորեն սպասարկել պետական ու հանրային շահերը:

Հիմնվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի պահանջների վրա և ելնելով վերոնշյալ տրամաբանությունից՝ ստորև ներկայացնում եմ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ի հայտի վերաբերյալ իմ գնահատականի հիմնավորումը:

### 1. Ֆինանսական հիմնավորվածության բացակայություն

Ընկերության կողմից ներկայացված ֆինանսական պլանը զուրկ է հստակ հիմնավորումներից: Թեև նշվում է մեկ միլիարդ ՀՀ դրամի ներդրման պատրաստակամության մասին, սակայն այդ միջոցների ձևավորման աղբյուրը՝ հիմնադիրների անձնական անշարժ գույքի գրավադրումը, չի ուղեկցվում շուկայական գնահատման կամ իրացվելիության մասնագիտական վերլուծությամբ: Ավելին, հայտում բացակայում է եկամուտների և ծախսերի կանխատեսվող կառուցվածքը: Գովազդային քաղաքականության և եկամուտների ձևավորման աղբյուրների մասին տեղեկատվության բացակայությունը վկայում է այն մասին, որ ընկերությունը պատշաճ պատկերացում չունի հանրապետական սփռում ապահովող հեռուստաալիքի պահպանման իրական ծախսատարության մասին:

### 2. Բովանդակության և կատարողական ներուժի անհամապատասխանություն

Ծրագրի բովանդակային մասն առաջին հայացքից թվում է չափազանց հագեցած և բազմազան՝ ներառելով տեղեկատվական, կրթական և ժամանցային բազմաթիվ հաղորդաշարեր: Սակայն, խորքային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ հավակնոտ ցանկի հետևում չի նկատվում համապատասխան կատարող թիմ:

Հայտում նշված չէ աշխատակազմի անհրաժեշտ քանակը, իսկ ներկայացված սակավաթիվ մասնագետների տվյալները բավարար չեն նման ծավալի և բազմապրոֆիլ բովանդակություն արտադրելու համար: Այսպիսով, առկա է լուրջ խզում առաջարկվող շռայլ եթերացանցի և դա իրականություն դարձնելու համար անհրաժեշտ մարդկային ռեսուրսների միջև: Փորձառու և բավարար քանակով թիմի բացակայությունը ստեղծում է վտանգ, որ հայտարարված հաղորդումները կամ չեն հեռարձակվի, կամ կունենան ցածր որակ:

### 3. Էթիկայի հանձնաժողովի և շահերի բախման խնդիրներ

Ինքնակարգավորման և էթիկայի հանձնաժողովի առաջարկված կազմում նկատվում է շահերի բախման ակնհայտ ռիսկ, քանի որ վերահսկող մարմնի կազմում ընդգրկված են

այդ ընկերության ղեկավար անձինք, ինչն ուղղակիորեն հակասում է անկախության և օբյեկտիվության սկզբունքներին:

**4. Գործնական երաշխիքների բացակայություն**

Ընկերության նորաստեղծ լինելը և մեդիաոլորտում փորձի բացակայությունը պահանջում էին ավելի հստակ գործնական երաշխիքներ (օրինակ՝ հուշագրեր միջազգային գործընկերների հետ կամ տեխնիկական վերազինման հստակ ժամանակացույց): Դրանց փոխարեն հայտում տեղ են գտել միայն հայտնի ապրանքանիշերի անուններ և ընդհանրական բնույթի խոստումներ, որոնք առանց իրական պայմանավորվածությունների չեն կարող հիմք հանդիսանալ պետական ռեսուրսի տրամադրման համար:

**Եզրակացություն.** Հիմնվելով հայտի համակողմանի ուսումնասիրության վրա՝ արձանագրում եմ, որ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ի ծրագրային դրույթները չունեն բավարար հիմնավորում: Ֆինանսական անորոշությունները և մասնագիտական թիմի համալրվածության խնդիրները թույլ չեն տալիս ծրագիրը դիտարկել որպես իրատեսական նախագիծ, որն ունակ է կատարելու հանրային մուլտիպլեքսում հեռարձակողի օրենքով սահմանված պարտավորությունները:

**Հաշվի առնելով այս հանգամանքները՝ հայտը գնահատվում է ցածր:**

**Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ** **Հասմիկ Հակոբյան**

14.05.2026թ.

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասնակցի՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերության («ԱՐԱՐ» ծրագիր) հայտի գնահատման

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը 2026 թվականի հունվարին հայտարարել էր հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթ, որին մասնակցելու ցանկություն է հայտնել և հայտ է ներկայացրել մեկ ընկերություն՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերությունը, «ԱՐԱՐ» ծրագրով: Հայտին կից ներկայացվել են «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կարգով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը:

Հանրային մուլտիպլեքսը պետության և հանրության համար ռազմավարական նշանակություն ունեցող մեդիահարթակ է, որտեղ տեսալսողական մեդիածառայություն մատուցող ընկերությունները հեռարձակման իրավունք են ձեռք բերում մրցութային կարգով՝ հիմնավորելով, որ ունեն բավարար ֆինանսական և տեխնիկական կարողություններ ապահովելու եթերի անխափան աշխատանքը, հաղորդումների բազմազանությունն ու բազմակարծությունը, իրենց խմբագրական քաղաքականությամբ ծառայում են հանրության և պետության շահերին, ունեն մասնագիտական թիմ, ինքնակարգավորման մեխանիզմներ, ապահովված են ու բացառում են շահերի բախումը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի համապատասխան դրույթները, ուսումնասիրելով մրցույթին մասնակցող «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ի հայտը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ ներկայացնում եմ իմ գնահատականի հիմնավորումը:

Կարևոր է նշել, որ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ն մինչ մրցույթին մասնակցելը տեսալսողական մեդիածառայություններ չի մատուցել, և այս բնագավառում գործունեության փորձ չունի: Մրցութային հայտում ներկայացված են ընկերության պատկերացումները հեռուստատեսային ծրագիր մշակելու և իրականացնելու վերաբերյալ: Ըստ այդմ, ներկայացված հայտում ընկերության նպատակն է ստեղծել բարձրորակ հեռուստատեսային բովանդակություն՝ ապահովելով տեղեկատվական, վերլուծական, մշակութային և կրթական հաղորդաշարերի բազմազանությունը և բազմակարծությունը:

Միաժամանակ, «ԱՐԱՐ» ծրագրի լիարժեք իրագործման համար ընկերությունը ներկայացրել է տեխնիկական հագեցվածության ցանկը, որը պարունակում է ոլորտում ամենաառաջատար տեխնիկական և տեխնոլոգիական միջոցները: Դրանք ընկերությունը պատրաստվում է ձեռք բերել մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո շատ կարճ ժամանակահատվածում:

Նմանապես, աշխատակազմի համալրումն ու մասնագիտական պատրաստվածության մասին տեղեկությունը, որը որոշ վերապահումներով կարող էի դրական գնահատել, եթե հայտում առկա կենսագրական տվյալները լինեին պատշաճ ներկայացված: Սակայն, հայտը այս առումով չի տալիս լիարժեք պատկերացում և համոզիչ պատասխան հարցին, թե ինչ աշխատակազմով է ընկերությունը պատրաստվում իրագործել ներկայացված հավակնոտ ծրագիրը:

Եվ ամենակարևորը, ծրագիրն իրագործելու համար ընկերության ֆինանսական հնարավորությունների գնահատումն է: «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ն խոստանում է է մեկ միլիարդ ՀՀ դրամ ներդնել «ԱՐԱՐ» ծրագիրը ստեղծելու և զարգացնելու համար: Որպես ներդրում խոստանում են հիմնադիրներին պատկանող անշարժ գույքը գրավադրել՝ ներգրավելու անհրաժեշտ ֆինանսական միջոցները: Սակայն տրամադրված չէ որևէ ֆինանսական փաստաթուղթ անշարժ գույքի շուկայական արժեքի վերաբերյալ: Ընդհանրապես հասկանալի չէ ընկերության ֆինանսական քաղաքականությունը, գովազդային մուտքերի կանխատեսումները: Գնահատման ենթակա որևէ փաստաթուղթ ներկայացված չէ:

Հետևաբար, ցածր եմ գնահատում մրցույթին ներկայացված «ԱՐԱՐ» ծրագիրը:

**Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ** **Գոհար Մամիկոնյան**

15.05.2026թ.

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասնակցի՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերության («ԱՐԱՐ» ծրագիր) հայտի գնահատման

«ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտ, ըստ որի հայտատուն նպատակ ունի ստեղծել բարձրորակ բովանդակություն, ապահովել տեղեկատվական, վերլուծական, մշակութային և կրթական հաղորդաշարերի բազմազանություն:

Ընկերությունը պնդում է, որ պատրաստվում է ներդնել մեկ միլիարդ ՀՀ դրամ հեռուստաընկերության ստեղծման և զարգացման համար, և ներկայացնում է, որ հիմնադիրներին պատկանող անշարժ գույքի գրավադրմամբ կապահովի այդ գումարը: Տվյալ գույքի շուկայական արժեքի, արագ իրացման հնարավորությունների և այլ մանրամասների մասին տեղեկությունները բացակայում են: Նշված չեն նաև ֆինանսական կանխատեսումներ, եկամուտի աղբյուրները և գովազդային քաղաքականության մասին տվյալները:

Միաժամանակ, հայտի պրեզենտացիայի ժամանակ պարզ դարձավ՝ հայտատուն տեղյակ չէ, որ հեռարձակման վճարը կազմում է ամսական 6 մլն ՀՀ դրամ, ինչը տարեկան կտրվածքով կազմում է 72 մլն ՀՀ դրամ: Այդ գումարը ներառված չէ հայտում: Սա վկայում է այն մասին, որ ընկերությունը չի գիտակցում հանրային մուլտիպլեքսում հեռարձակվելու համար անհրաժեշտ ֆինանսավորման ամբողջական ծավալները:

Հայտում նշվում է, որ «գործունեության առանցքային նախապայմանը փորձառու մասնագիտական թիմի առկայությունն է», սակայն չի ներկայացվում աշխատակիցների քանակը:

«ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ն հեղինակազորման հայտ էր ներկայացրել մրցույթին մասնակցելու համար: Սա նշանակում է, որ ընկերությունը մինչ մրցույթին մասնակցելը տեսալսողական ծառայություններ չի մատուցել, ուստի չունի համապատասխան փորձ:

Ընկերությունը նաև ներկայացրել է միջազգային գործընկերների ցուցակը, սակայն համագործակցության վերաբերյալ պաշտոնական փաստաթուղթ չի ներկայացվել:

**Եզրակացություն**

Այս բոլոր հանգամանքների համադրությունը վկայում է այն մասին, որ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ի ներկայացրած ծրագիրը իրականում միայն ցանկությունների շարադրանք է, որը չի կարող իրականացվել ընկերության սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով: Այս պատճառով մրցույթին ներկայացված ծրագիրը գնահատում եմ ցածր:

**Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ** **Ավետ Պողոսյան**

18.05.2026թ.

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի մասնակցի՝ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊ ընկերության («ԱՐԱՐ» ծրագիր) հայտի գնահատման**

«ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ի ներկայացրած ծրագիրը չափազանց ստանդարտ է և ՀՀ մեդիա ոլորտում իր ներկայության դեպքում որևէ նոր ու ինքնատիպ բան, որևէ տեղեկատվական, վերլուծական, հասարակական-քաղաքական, կրթական, հոգևոր-մշակութային առանձնահատուկ մոտեցում կամ երանգ չի պարունակում, որոնք կհարստացնեին կամ կլրացնեին մեր մեդիա դաշտը: Թեև ծրագրի դրույթները համապատասխանում են օրենսդրության դրույթներին ու չափանիշներին, սակայն յուրահատուկ ստեղծագործական լուծումներով աչքի չեն ընկնում:

Ընկերության ներկայացրած նյութական և տեխնիկական միջոցները պարզ չեն, դրանք բոլորը ավելի շատ երևակայության անորոշ ոլորտներում են, քան հիմնավորված նյութատեխնիկական բազայի և հիշյալ միջոցների կոնկրետությամբ: Դրանց ստեղծումը և ձեռքբերումը ապագայի և ցանկությունների դաշտում են և առարկայական ու շոշափելի քիչ ներկայացվածություն ունեն:

Նույնը վերաբերում է ընկերության ֆինանսական միջոցներին: Վերացական թվեր, որոնք կոնկրետանալու հավատ չեն ներշնչում. որպես դրանց այսպես ասած մոնետիզացիայի միջոցներ նշվում են գրավադրման ինչ-որ դարձյալ անորոշ և անհավաստի ծրագրեր ու հեռանկարներ:

Նույն անհամոզիչ և անորոշ վիճակն է նաև անձնակազմի հարցում: Փոխարենը՝ միջազգային համագործակցության խոստումներ և շռայլ ծրագրեր, որոնք թե ինչ մարդկային-մասնագիտական և տեխնիկական միջոցներով պետք է իրագործվեն՝ մնում է օդում կախված:

Տպավորություն է ստեղծվում, որ «ԼԱՅԹ-ՀԱԲ» ՍՊԸ-ն մակերեսային պատկերացումներ կամ առնվազն խանդավառության ոլորտում գործող ցանկություններ ունի հեռարձակման ժամանակակից միջոցների և ֆինանսական կարողությունների մասին:

Ելնելով այս ամենից՝ նրա ներկայացրած ծրագրի առկա վիճակով ես բարձր չեմ գնահատում ընկերության հնարավորությունները: Կարծում եմ, որ նրան դեռ այդ գործունեությամբ պատրաստվելու և նախապատրաստվելու, իր ծրագրերն ու կարողությունները ավելի որոշակիացնելու և հստակեցնելու համար ժամանակ է հարկավոր:

Այս ամենով ընկերության ծրագիրը առավելապես բարի ցանկությունների ոլորտին է պատկանում, քան կոնկրետ և շոշափելի հիմանվորումների:

Ես ընկերության ներկայացրած ծրագիրը գնահատում եմ ոչ բարձր:

**Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամ** **Հակոբ Հակոբյան (Հակոբ Մովսես)**

18.05.2026թ.